



Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ո Ւ Մ

Ա. ՍԱՆՃՅԱՆ

ԽՈՍՄՔՆ ՈՒՐԻՇՎ ԳՈՐԾՔՆ ՈՒՐԻՇՎ

Վերջին ամիսներուն ամերիկահայ մամուլը լայնորեն և մեծ խանդավառությամբ արձագանք եղալ Վենետիկի միաբանության արժանոք Գեր. Հ. Սրապիոն Ուլուհոճյանի ի պատիվ սարքված պատվասեղաններուն և հանդիսությանց։ Անոր ժամանոմեն ակսյալ մինչև մեկնումը, Նյու-Յորքեն մինչև Գալիֆորնիա, բարի դալուտի և ողջերթի շքեղ հավաքույթներ հայտարար նշաններ էին արժանորանհատական արժանիքներուն և անոր հանդեպ ամերիկահայության տված մեծարանքին։

Աբբահայրը Ամերիկա ժամանած էր որոշ առաջադրություններով — տեսնել իր հարազատները և Մխիթարյան միաբանության համար ապահովել նյութական օժանդակություն, ի միջի ալլոց, Հ. Բ. Ը. Միտլինեն։ Ասոնք բնականաբար կներկայացնեն հայտարարված և երևութական նպատակները։ Ասոնցմե զատ չկային թաքուն նպատակներ, որոնց մասին հրապարակային հայտարարությունը պիտի ըլլար համազոր տղայամտության և միամբտության։ Այդ անհատականության մտքին և հոգիին մեջ տեղ չէին գրավեր կրոնական և քաղաքական հեռահաս նպատակներ։ Աբբահայրը արդյոք տիպար ներկայացուցիչներեն մեկը չէ՞ Վատիկանի սարքած ավանդական կրոնա-քաղաքական ձգտումներուն։ Ասոնք հարցեր են, որոնց պիտի ջանանք անդրադառնալ մեր հետագա տողերով, առանց նախապաշարումի և հարանվանական զգացումներու կաշկանդիչ միջամտության։

Ամերիկահայությունը լիովին տված է ապացույցը զնահատանքի և քաջալերության իր առաքինություններուն, աբբահոր ընծայած հարգանքի երաշխիքով և շուրջ 50 հազար

դոլարի նվիրաբերումով։ Եվ ապահովաբար արբահայրը Ամերիկային մեկնեցալ գոհունակ սրտով և օրհնելով համայն ամերիկահայությունը իր առաքելության հանդեպ հայտնաբերած քաջալերության համար։

Այդ էր, արդարեւ, մեր տպավորությունը, երբ «Պայքար»ի օգոստոսի 15-ի համարին մեջ կարդացինք «Տեսակցություն մը Վենետիկի Մխիթարյանց արբահայր Գեր. Հ. Սրապիոն Ուլուհոճյանի հետ» թղթակցությունը, արտատպված Փարիզի «Այսօր»են։

Այդ տեսակցության մեջ մեզ շահագրգռողը հետևյալ հատվածն էր. —

«Կիսոսինք հետո Ամերիկայի նոր հայ սերունդին և առհասարակ արտասահմանի հայության ազդապահական մասին, որուն մեջ կարևոր դեր մը կատարելու կոչված են Մխիթարյանց կրթական առաքելությունները։

«Ամերիկահայության հին սերունդը, — կրտսե արբահայրը, — տակավին ի վիճակի է ալլո ուղղությամբ մտածելու և զոհելու։ Կես միլիոն դոլարի գումար մը բավական պիտի ըլլար դպրոց մը հիմնելու համար։ Մխիթարյանները պատրաստ են նման ծրագրի մը ընդառաջ երթալու, տրված ըլլալով որ մեր նպատակը միայն հայ լեզուն և մշակույթը տարածելն է և կրոնական ո՛չ մեկ խտիր և նպատակ կղենեկ մեր գործունեության մեջ։ Պիտի նախընտրեի, որ՝ օրինակ, փոխանակ դպրոց մը ունենալու Աղեքսանդրիո մեջ, ուր հայ ժողովուրդը չուծանար իր միջավայրի մեջ, ունենալինք դպրոց մը Պոստոնի մեջ»։

Առերևույթս խիստ ջատագովելի, որուն մեջ կարտացոլա ազգապահպանման նախաձեռնությունը, ինչպես նաև ավետարանական

անխտրական ոգին, սակայն, պատմական տվյալներուն հիման վրա զուրկ է ճշմարտութենե, որ քողերահան շրջանում արտահայտության մը քողին տակ, բացարձակ ժխտումն է անոր դավանած կաթոլիկ վարդապետության սկզբունքներուն, և մանավանդ անոր կրթական մշակներուն հայ ժողովուրդին մեջ ցարդ ունեցած գործունեության և ձգտումներուն:

Փորոգիություն պիտի ըլլար, արդարև, ուրանալ Վենետիկի Մխիթարյան միաբանության բերած նպաստը և դերը մասնավորաբար բանասիրական, պատմական, լեզվաբանական և այլ մշակութային մարզերուն մեջ: Վենետիկը, անցյալին մեջ արձանագրած է փառահեղ նվաճումներ իբրև հայ մտքի կեդրոն, և ներկայիս քիչ մը թե՛ նվազ ուժգնությունով հառաջ կտանի զայն: Այլ խոսքով, սխալ պիտի ըլլար որեւէ հայու համար հարանվանական նկատառումներով անշեքացնել Մխիթարյաններու գործը, երբ մանավանդ անոնց նվաճումները կրնան փառքը կազմել որեւէ մշակութային հաստատության: Անոնց բանասիրական աշխատանքը և հայ մշակութային արժեքները լույսին բերելու ճիշդ միշտ ալ արժանի պետք է ըլլա անխտիր բոլոր հայերու գնահատության:

Նույն վերագրումները, դժբախտաբար, կարելի չէ ընել Մխիթարյաններու կրթական գործունեության, որմե կարելի չէ անջատել նիւթակալը: Եվ նույնիսկ վերի մեր արտահայտություններու մեջ ունինք վերապահություններ, որովհետև Մխիթարյաններու կրոնա-պատմական բանասիրության մեջ հաճախ հանդիպեր ենք ճշմարտությանց դիտումնաւոր խեղաթյուրումներու, հատկապես հայ եկեղեցական պատմության առնչությամբ: Անոնց մեջ միշտ ալ տիրապետեր է կաթոլիկ աղանդամոլությունն ու անքրիստոնեալայել ալյամերժությունը: Հետևաբար, Մխիթարյաններու բանասիրական ուսումնասիրությանց գնահատումի պարագային միշտ հարկադրանքին տակ գտնված ենք զատորոշելու ճշմարիտ բանասիրությունը կրոնական աղանդամոլության կաշկանդումներին: Ասիկա անոր համար, որ Մխիթար անբաստացի արքայազնը և անոր հավատավոր հաջորդները գերապատիվ նկատած են իրենց կաթոլիկ դավանանքը, քան ազգային նկարագիրը, չէին կրնար տարբեր ըլլալ, քանի որ Կաթոլիկ եկեղեցին հաստատ եղած է միշտ իր միջազգային և տիեզերական հանգամանքին վրա:

Հարկ կա՞նք նշելու, թե հայ ժողովուրդին բացարձակ մեծամասնությունը — Հայրենիքի թե Սփյուռքի մեջ — հավատարմությամբ կառչած է տակալին Հայաստանյայց Առաքելական

եկեղեցվո դավանանքին՝ հակառակ դարերու հալածանքին, և թե բոլոր զաղովներուն մեջ թե՛ կաթոլիկ և թե՛ բողոքական համայնքները կհաշվեն շատ փոքր թիվ մը բաղդատած զանգվածին հետ, որ հավատարիմ մնացած է Ս. Գրիգոր Լուսավորչի հիմնավորած դավանանքին: Ասիկա չենք հիշեր պարզապես արձանագրելու համար անժխտելի իրողություն մը, այլ ցույց տալու համար, թե այդ հավատքը անբաժան մասը կազմած է հայ հոգիին, որովհետև՝

«Եկեղեցին Հայկական բարձր բերդն է հավատքին
իմ պապերու՝ որ հողեն զայն քար առ քար հանեցին,
եվ երկինքեն իջուցին զայն ցող առ ցող,
ամպ առ ամպ,
Ու թաղվեցա՜ն անոր մեջ հանդարտությամբ, հեզությամբ»:

Որովհետև՝

«Եկեղեցին Հայկական հայ հոգիին և մարմնոյն
Զրահանդերձն է փայլուն՝ մինչ իր
խաչերն են դաշույն
եվ զանգակներն են բոմբւն,
եվ երգն է միշտ հաղթություն»:
(Եկեղեցին Հայկական, Վ. Թեբեյան):

Մեր ազգային եկեղեցական պատմությունը լավագույն ապացույցն է այս հավատումին: Հայ ժողովուրդին ազգային և կրոնական հավատքին, ավանդության և աշխարհայացքին ամենն մեծ գրավականն է Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, զոր մեր նախահայրերը իմաստությամբ հորջորդեր են Ազգային եկեղեցի: Անիկա հարազատ ծնունդն է իր հոգիին, հավատքին, այս պատճառով անկե դուրս կրոնական որեւէ ձգտում և շարժում խորթ և անհարազատ եղած է իրեն և է տակալին: Եվ ճիշտ այս պատճառով հայ ժողովուրդին մեջ ներմուծվող օտարադավան քաղաքականություններ — առանց միջոցներու խտրության — միշտ ալ իրենց դեմ գտեր են հաստատ ընդդիմությունը հայ զանգվածներուն՝ արդար ընդվզումով մը:

Մյուս կողմ, Մխիթարյանները կաթոլիկներ են. յայսինքն անոնք մաս կկազմեն այսպես կոչված պապական, տիեզերական, Հռոմեական Կաթոլիկ եկեղեցիին: Միջին դարու եվրոպական պատմության ծանոթ 'իդոլ անհատներ տեղյակ են պապական եկեղեցիին և պետության միջև աշխարհիկ դերիշխանության համար մղված պայքարին, որ ի վերջո հանգեցավ պապին պարտության: Այդ պայքարը, սակայն, խուլ կերպով

շարունակվեցավ դարերու ընթացքին և կշարունակե տակավին այսօր:

Արևելյան օրթոդոքս կամ ուղղափառ — հայ, հույն, ասորի, դպտի — եկեղեցիներուն համար Կաթողիկ եկեղեցին հեռավաճ մըն է 451 Ք. Ն. Բվականն ասդին, երբ ան բաժնրվեցավ մյուսներն Բաղկեդոնի ժողովին հարուցված Բրիտանի բնության շուրջ տարակարծության բերումով:

Այս կամա շեղումը անհրաժեշտ նկատեցինք մատնանշելու համար թե Մխիթարյանները իբրև մեկ մասնիկը Կաթողիկ հեռավաճ եկեղեցին և համաձայն պապական մեծատիրական ձգտումներուն՝ իրենց առաքելությունը նկատեցին դավանափոխ ընել հայ ժողովուրդը և միացնել զայն Կաթողիկ եկեղեցին, որ զուրկ է ազգային աշխարհայացքի: Հաջողեցան այդ առաքելության մեջ: Հայ ազգային-եկեղեցական պատմությունը հատկորեն կուտա անոր պատասխանը: Այդ պարտությունը հուսալքեց պապականությունը: Ո՛չ երբեք:

Այս օրերուն Կիլիկիո այսպես կոչված Կաթողիկոս-Պատրիարքը՝ Կարգինալ Աղաջանյան, Վենետիկի արքահայրը՝ Գեր. Հ. Սրապիոն Ուլուհոճյան և Մխիթարյան միաբանները Միջին Արևելքի, Նվորդայի և Ամերիկայի մեջ նոր թափ մը տված են իրենց գործունեության՝ նույն առաքելության իրագործման համար: Փափաքով Կարգինալ Աղաջանյանի «Հովվական թուղթ»երը, որոնք ուրիշ բան չեն հատկանշեր, եթե ոչ կրոնապատմական խեղաթյուրումներ, ցույց տալու համար թե կաթողիկեությունը հարազատ կրոնական դավանանքն է հայ ժողովուրդին, թե Պետրոս առաքյալը առաքելապես է և հետևաբար անոր հիմնած Հռոմի եկեղեցին՝ ավագ եկեղեցին: Նվ, վերջապես, հրավեր մը հայ ժողովուրդին՝ միանալու Կաթողիկ մայր եկեղեցիին:

Կարգինալ Աղաջանյանի «Հովվական թուղթ»ին հմտորեն պատասխանած է Անթիլիասի Դպրեվանքի տեսուչ Գեր. Տ. Դերենիկ եպիսկոպոս, «Թուղթ հերքման» (պատասխան կարգինալ Աղաջանյանի «Հովվական թուղթ») գրքույկով, որուն 5-րդ տպագրությունը աչքի առջև ունինք այս խորհրդածության պահուն: 67 էջոց այս պատասխանը կանգնադառնա ծիրանավորի թուղթին կրոնա-քաղաքական բովանդակության, և պատմական վկայություններով կհերքե անոր թե սատվածաբանական և թե՛ ազգային, կրոնական և պատմական դիտումնավոր խեղաթյուրումները, մերկացնելով հանդերձ Կաթողիկ եկեղեցիին դիտավորությունները:

Հոս տեղը չէ անդրադառնալ ուղղափառ և

կաթողիկ եկեղեցիներու դավանական և աստվածաբանական տարակարծություններուն: Հմուտ եկեղեցականներ անցյալին մեջ զբաղած են ու տակավին կզբաղին այդ հարցերով: Մեզ այս առիթով շահագրգռողը կաթողիկեներու, այսինքն Մխիթարյաններու կրթական աշխատանքն է:

Արտասահմանի դանազան հայաշատ կեդրոններուն մեջ Մխիթարյանները ունին իրենց սեփական կրթարանները՝ իրենց փոքրածիվ համայնքներու դավաններուն ջամբելու կաթողիկադավան դաստիարակություն մը: Կասկած չկա, թե այդ հաստատություններին ներս ջամբված դաստիարակությունը իր միջազգային հանգամանքով կնպաստե միմիայն շեղծացնելու և խաթարելու հայ մանուկին և պատանին ազգային նկարագիրն ու ոգին:

Կաթողիկ և Մխիթարյան գործունեության գլխավոր կռիվներն են մեկն է Սյուրիա-Լիբանանը, ուր կգտնվի կարդինալ Աղաջանյանի աթոռը, կհրատարակվի պաշտոնաթերթը և ուր կան աղջկանց և մանչերու վարժարաններ: Այս հաստատությունը, իր հոգևոր պետով, հավատարիմ պապական կրոնա-քաղաքական ուղղության և առաջադրություններուն՝ կազմակերպած է նոր արշավ մը իբր թե ալլաբերած հայ ժողովուրդը ձշմարիտ կրոնքին և դավանանքին հրավիրելու: Անոնց կրթարանն ենս կընդունվին նաև Հայաստանյայց Առաքելական եկեղեցիի զավակները, որոնց ջամբված դաստիարակության դեմ ընդվզումի, ցասումի արտահայտության լավագույն ապացույցն է բժիշկ Օ. Գ. Ն. ի նամակը՝ «Դուք խախտեցիք իմ հավատքս...» (բաց նամակ Ս. Հոփսիմյանց վարժարանի պատվարժան տնօրինության, Բեյրութ) (տե՛ս «Զարթոնք», 12 հունիս 1951):

Մեր նյութին հետ սերտորեն աղերս ունեցող այս սրտառու նամակն կարտագրենք կարգ մը հատվածներ, որոնք պերճախոս են ինքնին: Նամակագրին աղջնակը դրված է վերոհիշյալ կաթողիկ վարժարանը, ուր կըսէ ան՝ «Կատարյալ հանդուրժողությամբ հետեցա իր դպրոցական կրթության:

«Այսպես, առաջին տարին տրվեցավ սկզնականներու հատուկ այբբենարան մը, ուր թրքերեն բառերը օրը ցերեկով պար բռնած էին: Սրբագրեցի և համբերեցի:

«Այս շնաշխարհիկ գրքույկը հավամանկավարժական գլուխ-գործոց մըն է, և կվերջանա «Ֆրանսուա»-ով:

«Զավակս երեք տարեկանին արդեն սկզսած էր հայերեն խաչակնքել և հայերեն աղոթել:

«Հաղիվ ձեր դպրոցը մուտք գործած՝ ոչ

միայն դադրեցուց հայերեն խաշակնքելը, այլև իմ հայ օջախին մեջ սկսավ ֆրանսերեն աղոթել:

«...Հաջորդիվ նկատեցի թե աղջնակիս շաբաթական 4 պահ հայերեն և 6 պահ ֆրանսերեն կդասավանդվեր. թույլ էր և պետական լեզուն:

«...5—7 տարեկանին, աղջնակիս ֆրանսերեն «քաթեշիզմ» դասավանդեցիք: Կրոնադիտության դասին անհրաժեշտությունը կհասկնամ: Բայց ինչո՞ւ ֆրանսերեն և ոչ հայերեն: Եվ ինչո՞ւ տարբեր դավանանքի պատկանող աղջկանս կաթոլիկ դավանանքը պիտի դասավանդվի:

«...Ներկա եղա 1950—1951 տարեշրջանի ձեր ամսվերջի հանդեսին: Տեսա բնմբ: Լսեցի արտասանությունները: Ու տեղվույն վրա սկսա խորհրդածել. ֆրանսերեն կտիրապետե: Պետական լեզուն գրեթե չկա էր: Հայերենը միջակ տեղ մը կգրավի:

«Լսեցի Պ. Քաջարենցի հաղթական ճառը... Բանիմաց ճառախոսը, քաջամուտ հայ դպրոցական և կրթական պատմության, հանդիսականներու ներկայության բարեկերթորեն այլափոխեց և չարափոխեց հայ դպրոցական կրթական պատմությունը:

«...Ժխուրը դպրոցական շրջանակի մը մեջ սիրելի չէ: Դպրոցը քարոզչության վայր չէ: Պատերազմի դաշտ չէ:

«...Զեր գլխավորած դպրոցը իր ինքնուրույն կրթական ծրագրով իմ աղջնակիս ազգային նկարագարը կերտելի շատ հեռու է:

«...Զեր մեծավորները, այս պահուս, կփորձեն ոտնահարել իմ ազգային-կրոնական զգացումները հրապարակով և դուք անուղղակիորեն կջանաք իմ անմեղունակ աղջնակիս հայ ներհանաբան հոգեփոխել:

«Կսկծանքով կհաստատեմ թե դուք խախտեցիք իմ հավատքը ձեր դպրոցին նկատմամբ և ունեցած վստահությունս:

«Հեթանոսները մեկ կողմ թողած, օտար երկնակամարին տակ, կհանդգնիք քաղաքական զոհ մը բղթտել ու իմ զավակս ապափառաբանեցնել: Այս մեկը՝ ո՛չ: Ամեն մարդ իր տեղը: Եվ իմ աղջնակիս միակ տեղը իր նախապապերուն, պապերուն և հոր հաճա-

խած ազգային կրթական ավանդատուն-հիմնարկն է միայն, ուր հայ հայ վստահության զգացումը կտիրապետե...»

Ցասումի այս տողերը չեն կարոտիր մեկնաբանության: Պատկերը նոյնն է ամեն տեղ, ուր հայ կաթոլիկները և Մխիթարյանները կրթական հաստատություններ ունին: Եվ չի կրնար տարբեր ըլլալ Պոստոնի կամ Ամերիկայի ուրիշ որեէ գաղութի մեջ, հոգ չէ Գեր. Հ. Սրապիոնի նման կաթոլիկ կղերականներ հայտարարեն թե՛ «Պատրաստ են նման ծրագրի մը ընդառաջ երթալու, տրված ըլլալով, որ մեր նպատակը միայն հայ լեզուն և հայ մշակույթը տարածեն է և կրոնական ոչ մեկ խտիր և նպատակ կունենք մեր գործունեության մեջ»: Մխիթարյաններու կրթական գործունեության պատմությունը և վերոհիշյալ նամակին բովանդակությունը ճիշտ հակառակը չեն՝ ապացուցաներ:

Ամերիկահայ երիտասարդության աստվածանական այլասերումը և ռեալումը կթվի մտահոգած ըլլալ Գեր. Արքահայրը: Անուրանալի է այդ վտանգը, ինչպես դայն դիմադրելու ճիգը՝ սկսար: Եվ արդարև այլասերումը չփոթացվի՝ եթե ամերիկահայ դպրոցներուն հոգատարությունը հանձնվի կաթոլիկ Մխիթարյաններուն:

Գաղութահայության ազգապահպանումի միակ կովանը կրնա ըլլալ Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, որովհետև՝ ան հաւաքատուրեն ազգային է, որովհետև՝ անփկաքե՝ արգասիք է քե՝ ավանդապահն է մեր ցեղային հավատքին, ավանդություններուն, բարբերուն և հայու հոգիին:

Մխիթարյաններու շամբած դաստիարակությունը չի կրնար երբեք ըլլալ ազգային, այլապես անիկա ժխտումը պիտի ըլլար կաթոլիկ դավանանքին միջազգային և տիեզերական հորջորջումին:

Մյուս կողմի, ամերիկահայության համար հեգնական պիտի ըլլար (եթե անոր բացարձակ մեծամասնությունը՝ հակառակ եկեղեցական և քաղաքական անջատումին՝ կղականի Հայաստանյայց Առաքելական եկեղեցվո կրոնական վարդապետությունը) ակնկալել, որ կաթոլիկադավան Մխիթարյաններ ընդառաջ երթան նման ծրագրի մը

իրագործման, երբ ամերիկահայոց առաջնորդությունը կրնա զայն հեշտությամբ ի գլուխ հանել՝ ապահովելով իր դավանանքին հավատարիմ դաստիարակներ, հոսկե կամ այլուր Առաջնորդարանը արդեն իսկ ձեռնարկած է Նյու-Յորքի մեջ կրթարանի մը և դպրեմանք կրթարանի մը հաստատումին, որ պետք է վայելե ժողովուրդին արժանի քաջալերությունը՝ վարելի փութով զայն իրագործելու համար: Բաց աստի, Ամերիկայի մյուս հայաշատ կեդրոններուն մեջ տարիներն ի վեր արդեն գոյություն ունեին հայեցի դաստիարակություն ջամբող դպրոցներ, որոնք պետք ունին քաջալերության, հարատևության և փազմակերպչալ աշխատանքի:

Ամերիկահայության պարտականությունն է, եթե կուզե իր նոր սերունդին ազգային նկարագիրը անխաթար պահել, նեցուկ կանգնել այս ծրագիրներուն, որոնք տառացիորեն ազգային են:

Այլապես Մխիթարյան կրթական մշակների պատրաստ են իրենց հասկացողությամբ հայեցի դաստիարակություն ջամբելու, դաստիարակություն մը՝ որ իրավ հայեցի ըմբռնումով հեռու է հարազատ ըլլալի, որովհետև Մխիթարյանները ամեն բանն առաջ կաթուղի են, այսինքն միջազգայնական, և ապա հայ:

Մեր անցյալ և ներկա պատմությունը կհաստատե այս երևույթը:

Հայ ժողովուրդին ստվար մեծամասնությունը քաջ ծանոթ է Հոռմի և Վենետիկի սաղրանքներուն:

Հայ ժողովուրդը համոզված է իր պատմութենեն՝ «խոսքն ուրիշ՝ գործքն ուրիշ» ասացվածքին իմաստության:

(Արտատպված Նյու-Յորքի «ՆՈՐ ՕՐ» թերթի 1951 թվի սեպտեմբեր 7-ի և 11-ի համալրանքից):

